ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«06» հուլիսի 2017 թվականի № 18

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի № 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 6-ի № 5 հերթական նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ղեկավարի կողմից 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին

2. Համայնքի 2017 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին

3. Համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին» № 30-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

4. Համայնքային սեփականություն հանդիսացող 03-050-0216-0001 և 03-050-0217-0001 ծածկագրերով հողամասերի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու մասին

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՌՈՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք.
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06 հուլիսի 2017 թվականի № 19

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» № 656 որոշման 9-րդ կետի դրույթներով՝ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների և օգտագործման ձևերի՝ համաձայն հավելվածի:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հուլիսի 2017 թվականի № 20

## ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Խաչփար համայնքի 2017 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» հուլիսի 2017 թվականի № 21-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի «ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» № 30-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ , 3-րդ և 5-րդ մասերի պահանջներով՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին» № 30-Ն որոշման մեջ համայնքի ղեկավարի կողմից առաջարկված փոփոխությունները և լրացումները.

1) 3-րդ կետով հաստատված հավելվածի հատված 2-ի՝

ա. 3-րդ կետի՝ «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.3.3 ծրագրի «120.0 » թիվը փոխարինել «126.0» թվով,

բ. 4-րդ կետի՝ «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.6.1 ծրագրի «1 810.0 » թիվը փոխարինել «2 010.0» թվով,

գ. 14-րդ կետի՝ «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի «1 554.5 » թիվը փոխարինել «1 348.5» թվով,

2) 4-րդ կետով հաստատված հավելվածի հատված 3-ի՝

ա. «համակարգչային ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4232 հոդվածի «150.0 » թիվը փոխարինել «156.0 » թվով,

բ. «մասնագիտական ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածի «750.0 » թիվը փոխարինել «950.0 » թվով,

գ. «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «1 554.5 » թիվը փոխարինել «1 348.5» թվով,

3) 5-րդ կետով հաստատված հավելվածի հատված 6-ի՝

ա. «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.3.3 ծրագրի «համակարգչային ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4232 հոդվածի «120.0» թիվը փոխարինել«126.0» թվով, «ընդամենը» տողի «120.0» թիվը փոխարինել «126.0» թվով,

բ. «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 01.6.1 ծրագրի «մասնագիտական ծառայություններ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածի «600.0» թիվը փոխարինել «800.0» թվով, «ընդամենը» տողի «1 810.0» թիվը փոխարինել «2 010.0» թվով,

4) «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 11.1.2 ծրագրի

ա. «պահուստային ֆոնդ» բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածի «1 554.5» թիվը փոխարինել«1 348.5» թվով, «ընդամենը» տողի «1 554.5» թիվը փոխարինել«1 348.5» թվով,

5) 6-րդ կետի «12 741.02» թիվը փոխարինել «14 553.937» թվով,

6) 7-րդ կետի

ա. 3-րդ ենթակետի «0» թիվը փոխարինել «1 812. 917 հազար դրամ» բառերով,

բ. 5-րդ ենթակետի աղյուսակը լրացնել «04.5.1 ճանապարհային տրանսպորտ 998.0» տողով, «04.2.4» թվերը փոխարինել «09.8.1» թվերով, « ոռոգում» բառը փոխարինել «կրթություն այլ դասերին չպատկանող» բառերով, «10 941.02» թիվը փոխարինել «11 755.937» թվով, «12 741.02» թիվը փոխարինել «14 553.937» թվով,

գ. 6-րդ ենթակետի աղյուսակը լրացնել «5113 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 11 505.937» տողով, «10 691.02» թիվը փոխարինել «973.0» թվով, «250.0» թիվը փոխարինել «275.0» թվով, «12 741.02» թիվը փոխարինել «14 553.937» թվով,

դ. 7-րդ ենթակետը լրացնել «5113 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 11 505.937» տողով, «10 691.02» թիվը փոխարինել «973.0» թվով, «250.0» թիվը փոխարինել «275.0» թվով:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌՈՒՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱԳԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Խաչփար համայնքի ավագանու 2017 թվականի

հուլիսի 6-ի № 20 որոշման

2017 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

| ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2017թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | 2-ՐԴ ԵՌԱՄՍ. ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ԿԱՏԱՐ ՄԱՆ % | ԿԱՏԱՐՄԱՆ % ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ |
|---|---|---|---|---|---|
| Վարչական բյուջե | 42 555.5 | 22 815.0 | 21 512.1 | 94 | 50.5 |
| Հողի հարկ | 4 300.0 | 2 000.0 | 2 200.0 | 110 | 51 |
| Գույքահարկ | 3 500.0 | 2 600.0 | 2 459.8 | 95 | 70 |
| Տեղական տուրք՝ընդամենը | 288.0 | 144.0 | 212.5 | 147 | 74 |
| Համայնքային հողերի օգտագործման վարձավճ. | 416.8 | 200.0 | 83.9 | 42 | 20 |
| Տեղական վճարներ | 1 409.0 | 1 200.0 | 258.0 | 86 | 18 |
| Պետական բյուջեից համահարթեցման դոտացիա | 31 941.7 | 15 971.0 | 15 970.9 | 100 | 50 |
| Այլ ոչ հարկային եկամուտներ | 700.0 | 700.0 | 327.0 | 47 | 47 |
| Ֆոնդային բյուջե | 12 741.0 | 12 741.0 | 14 533.9 | 114 | 114 |
| Եկամուտներ: Ընդամենը | 55 296.5 | 35 556.0 | 36 046.0 | 101 | 65 |

## 2017 Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

| ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2017 թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | 2-րդ ԵՌԱՄՍ-ՅԱԿԻ ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ԿԱՏԱՐՄԱՆ % | ԿԱՏԱՐ ՄԱՆ % ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ |
|---|---|---|---|---|---|
| Վարչական բյուջե | 42 555.5 | 22 815.0 | 14 946.6 | 65 | 35 |
| Օրենսդիր և գործադիր մարմին պետական կառավարում 01.1.1 | 21 141.0 | 10 630.0 | 7 987.3 | 75 | 38 |
| Աշխատակազմի/ կադր.գծ. ընդհ. բն.ծառ.-եր 01.3.1 | 50.0 | 30.0 | - | - | - |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01.3.3 | 120.0 | 60.0 | 51.6 | 86 | 43 |
| Ընդհանուր բնույթի հանր. ծառայություններ 01.6.1 | 1 810.0 | 1078.0 | 809.7 | 75 | 47 |
| Գյուղատնտեսություն 04.2.1 | 100.0 | 100.0 | - | - | - |
| Ոռոգում 04.2.4 | 1 500.0 | 1500.0 | - | - | - |
| Աղբահանում 05.1.1 | 1 700.0 | 867.0 | 678.0 | 78 | 40 |
| Փողոցային լուսավորում 06.4.1 | 300.0 | 100.0 | - | - | - |
| Գրադարան 8.2.1 | 1 330.0 | 620.0 | 570.0 | 92 | 43 |
| Այլ մշակութային կազմակերպ.-ներ 08.2.4 | 450.0 | 450.0 | - | - | - |
| Նախադպրոցական կրթություն 09.1.1 | 10 100.0 | 5 553.0 | 3 940.0 | 71 | 39 |
| Միջնակարգ կրթություն 09.2.2 | 100.0 | - | - | - | - |
| Սոցիալական հատուկ արտոնություն 10.7.1 | 2 300.0 | 1 350.0 | 910.0 | 67 | 40 |
| Պահուստային ֆոնդ 11.1.2 | 1 554.5 | 477.0 | - | - | - |
| Ֆոնդային բյուջե | 12 741.0 | 12 741.0 | - | - | - |
| Ծախսեր : Ընդամենը | 55 296.5 | 35 556.0 | 14 946.6 | 42 | 27 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» հուլիսի 2017 թվականի № 22

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 03-050-0216-0001 ԵՎ 03-050-0217-0001 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՏՐԱՄԱԴՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասով՝ ավագանին որոշում է.

Համայնքային սեփականություն հանդիսացող 03-050-0216-0001 և 03-050-0217-0001 ծածկագրերով հողամասերի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու մասին ուղերձով դիմել Հայաստանի Հանրապետության նախագահին և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

Կողմ(7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

Հայաստանի Հանրապետության Նախագահ

պարոն Ս. Սարգսյանին

Մեծարգո Նախագահ,

Արարատի մարզի Խաչփարի համայնքային սեփականություն հանդիսացող 03-050-0217-0001 և 03-050-0216-0001 ծածկագրերով 2.0 հա - ից ավելի գյուղատնտեսական նշանակության հողամասերի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից համայնքին չեն տրամադրվում տեղեկություններ, որի պատճառով ձախողվել է համայնքի գլխավոր հատակագծի վերջնական կազմումը:

03-050-0217-0001 ծածկագրով անշարժ գույքից 0.27 հա հողամասը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի տարածքային ստորաբաժանման նախկին ղեկավար Ս. Սարգսյանի և Ազատաշեն համայնքի նախկին ղեկավարի հանցավոր համաձայնությամբ աճուրդային կարգով Խաչփարի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ձևակերպվել է Ազատաշեն համայնքի նախկին ղեկավարի կնոջ Գայանե Խաչատրյանի անվամբ, վերջինս էլ այն վաճառել է Ազատաշեն համայնքի բնակիչ Արսեն Ավետիսյանին: Նշված փաստը հանդիսանում է հիմնական պատճառը 03-050-0217-0001 ծածկագրով հողամասի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու համար: 03-050-0216-0001 ծածկագրով 1.0 հա –ից ավելի հողամասի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվում, որովհետև Խաչփարի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը Արարատի մարզի Դաշտավան համայնքի նախկին ղեկավարի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի տարածքային ստորաբաժանման հանցավոր համաձայնությամբ վաճառվել է խիճ արդյունահանող ինչ-որ կազմակերպության:

Հարգարժան նախագահ, ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնում 2017 թվականի հունվարի 27-ին հարուցվել է քրեական գործ, սակայն մինչև օրս համայնքին հասցրած վնասը չի վերականգնվել և նշված անօրինականությունները կատարողները պատասխանատվության չեն ենթարկվել: Խնդրում ենք Ձեզ նշված խնդիրը վերցնել Ձեր հսկողության տակ՝ համայնքի սեփականությունը վերականգնելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

Կանխավ հայտնում ենք շնորհակալություն:

Հարգանքներով՝

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.gyughapetaran@mail.r

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ

պարոն Ա. Դավթյանին

Հարգարժան դատախազ,

Արարատի մարզի Խաչփարի համայնքային սեփականություն հանդիսացող 03-050-0217-0001 և 03-050-0216-0001 ծածկագրերով 2.0 հա - ից ավելի գյուղատնտեսական նշանակության հողամասերի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից համայնքին չեն տրամադրվում տեղեկություններ, որի պատճառով ձախողվել է համայնքի գլխավոր հատակագծի վերջնական կազմումը:

03-050-0217-0001 ծածկագրով անշարժ գույքից 0.27 հա հողամասը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի տարածքային ստորաբաժանման նախկին ղեկավար Ս. Սարգսյանի և Ազատաշեն համայնքի նախկին ղեկավարի հանցավոր համաձայնությամբ ապօրինի կարգով Խաչփարի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ձևակերպվել է Ազատաշեն համայնքի նախկին ղեկավարի կնոջ՝ Գայանե Խաչատրյանի անվամբ, վերջինս էլ այն վաճառել է Ազատաշեն համայնքի բնակիչ Արսեն Ավետիսյանին: Նշված փաստը հանդիսանում է հիմնական պատճառը 03-050-0217-0001 ծածկագրով հողամասի վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրելու համար: 03-050-0216-0001 ծածկագրով 1.0 հա –ից ավելի հողամասի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվում, որովհետև Խաչփարի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը Արարատի մարզի Դաշտավան համայնքի նախկին ղեկավարի և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Մասիսի տարածքային ստորաբաժանման հանցավոր համաձայնությամբ վաճառվել է խիճ արդյունահանող ինչ-որ կազմակերպության:

Հարգարժան պարոն Դավթյան, ՀՀ ոստիկանության Մասիսի բաժնում 2017 թվականի հունվարի 27-ին հարուցվել է քրեական գործ, սակայն մինչև օրս համայնքին հասցրած վնասը չի վերականգնվել և նշված անօրինականությունները կատարողները պատասխանատվության չեն ենթարկվել: Խնդրում ենք Ձեզ նշված խնդիրը վերցնել Ձեր հսկողության տակ՝ համայնքի սեփականությունը վերականգնելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար:

Կանխավ հայտնում ենք շնորհակալություն:

Հարգանքներով՝

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՌԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ